ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2018թ.-ի հոկտեմբերի 10-ին կնքված N ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 Ճաշարանային սննդի մատուցման ծառայության մատուցման գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք.Երևան

27-ը սեպտեմբերի 2019թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Դարմիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Կ.Օգանեզովի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

հիմք ընդունելով Կողմերի միջև 2018թ.-ի հոկտեմբերի 10-ին կնքված N ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 Ճաշարանային սննդի մատուցման ծառայության մատուցման գնման պայմանագրի 7.6 կետի պահանջները՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնվեցին.

1. Կողմերի միջև 2018թ.-ի հոկտեմբերի 10-ին կնքված N ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/5 Ճաշարանային սննդի մատուցման ծառայության մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 048 000 (ինը միլիոն քառասունութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը»:
2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի նախատեսված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» աղյուսակի «Ընդհանուր գինը/ՀՀ դրամ» անվանումով սյունակով սահմանված «8352000» թիվը փոխարինել «9048000» թվով:
3. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով նախատեսված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» աղյուսակի «Ժամկետը**» անվանումով սյունակով սահմանված «Պայմանագրի կնքման օրվանից 1 տարի ժամկետով» արտահայտությունը փոխարինել «2018թ.-ի հոկտեմբերի 10-ից մինչև 2019թ.-ի նոյեմբերի 10-ը ներառյալ» արտահայտությամբ:
4. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
6. Սույն Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Մ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

«Դարմիքս» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գալշոյան 10 շենք, բն.29
ՀՎՀՀ՝ 00871214
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2480100084690000

Կ.Օգանեզով
Տնօրեն